

26. 257

122

ՊՈՌԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ ՄԻԱՅԵՐ

ՀՐԱՄԱԿ. ՀԱՅԹՎՈՒՂԿՈՈԹԻ ԿՈԼՏՆՏԿԵՆՏՐՈՆԻ

# ԿԵՆԱՆԵԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՅՈՒԴԱՑՆՏԵՍՈՒԿԱՆ ԱՐՏԵԼԻ

334.6 :  
4-21

ՅԵՐԵՎԱՆ - 1930

17 MAY 2013

26-25+

334.6:

4 - 21

ԱՀ

15 JAN 2010

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պյուղատնեսական

արժելի

### I. ԱՐՏԵԼԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Աշխատավորական հողոգտագործման և գյուղատնտեսական կոռպերացիայի վերաբերյալ գործող որենքների հիման վրա, սույն կանոնադրության համաձայն հիմնվում և գյուղատնտեսական այս Արտելը


անունով :

Արտելը գործում ե ՀՍԽՀ

գավառակի

գավառակի  
գլուղում (քաղաքում):

Արտելի հողամասը կազմում է



14798-57

2. Արտելը նպատակ ունի կազմակերպելու և զարգացնելու Արտելի ընդհանուր հողամասում իր անդամների միասնական աշխատանքով ու միջոցներով կատարելագործված գյուղատնտեսություն :

3. Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Արտելն իրավունք ունի՝

ա) Զեռք բերել աշխատավորական կողեկալիվ հողոգոտագործման իրավունքով դանաղան տեսքի հողամասեր և միջոցներ ձեռնարկել հողաշինարարության յենթարկելու այդպիսիները՝ Հողային Ուժենսդրքով ռահմանած կարգով :

բ) Կատարել հողի դանաղան բարելավում (մելիորացիա) այն ե՛ վոռոգում, ճահիճների չորացում, անտառ տնկել և այլն :

գ) Զեռք բերել Արտելի և նրա անդամների կարիքների համար արտագրության անհրաժեշտ միջոցներ այն ե՛ գյուղատնտեսական մեջենաներ, դործիքներ, բանող և այլ ոգոտագործելի անասուններ, սերմեր, պարաբատանյութեր և այլն :

դ) Կազմակերպել վարձու, բեղմնավորման, սերմագոտման և սրանց տիպի այլ կայաններ :

յե) Կազմակերպել Արտելի և նրա անդամների տնտեսությունների մթերքների վաճառքը :

յղ) Զեռք բերել, կառուցել, վարձով վերցնել և ոգոտագործել գյուղատնտեսական մթերքների և նյութերի մշակման և վերամշակման համար ձեռնարկություններ, այն ե՛ ջրաղացներ, ոսլայագործարան, յուղարկի վերանորոգման արհեստանոցներ :

յա) Արտելը նպատակների և այլ կառուցել գյուղատնտեսական անձի բոլոր իրավունքներով և կարող ե կնքել զանաղան տեսակի պայմանագրեր և հանձն առնել պարտավորություններ, ի թիվս, վորոնց մուրհակային և կոմիսիոն, ձեռքբերել և ոտարել գույք, կառուցել շենքեր ինչպես աշխարհաբաններ և այլն, կազմակերպել գյուղմեթենաներ

ե) Կառուցել շենքեր և սարքավորումներ ելեքտրականություն ստանալու և գործադրելու, ինչպես գյուղատնտեսության մեջ, նույնպես և տնային տնտեսության մեջ :

ը) Կազմակերպել ցուցադրական և փորձարկաշտեր, այդիներ, բանջարանոցներ, անասնաբուժարաններ, սերմնաբուժարաններ, տնկարաններ և այլն :

թ) Ցույց տալ Արտելի անդամներին տնտեսական և այլ ոգոտություն :

ժ) Կազմակերպել փոխադարձ ոգնության դրամարկղներ մահվան, հիվանդության, հրդեհի և այլ տարերային աղետների դեպքերում՝ ոգնություն հասցնելու նպատակով :

ի) Կազմակերպել հարևան աղբաբնակության հետ միասին մեքենայական, սերմնային, մելիորատիվ և այլ ընկերություններ ու արտելներ :

լ) Տարածել, Հողդողկոմատի և Լուսժողկոմատի տեղական մարմինների հսկողությամբ, կոռպերատիվ և գյուղատնտեսական դիտելիքների՝ կազմակերպելով դասախոսություններ, զրույցներ, դպրոցներ և այլ միջոցներ :

լի) Զեռք առնել այլ միջոցներ բարելավելու և բարձրացնելու Արտելի տնտեսության արտադրողականությունն ու արդյունավետությունը :

4. Արտելը ոգոտվում է իրավաբանական անձի բոլոր իրավունքներով և կարող ե կնքել զանաղան տեսակի պայմանագրեր և հանձն առնել պարտավորություններ, ի թիվս, վորոնց մուրհակային և կոմիսիոն, ձեռքբերել և ոտարել գույք, կառուցել շենքեր ինչպես աշխարհաբաններ և այլն, կազմակերպել գյուղմեթենաներ

խատավորական հողոգտագործողների համար սահմանաված հիմունքներով, նույնպես և կառուցման իրավունքով, ընդունել նվիրատվություններ, հայց հարուցել և հանդիսանալ պատասխանող կողմ դատարանում :

5. Արտելն իրավունք ունի Ընդհանուր ժողովի վորոշմամբ անդամադրվել գյուղատնտեսական կոռպերատիվ միություններին և մտնել այլ հասարակական կազմակերպությունների մեջ, վորոնք իրենց գործունեյությամբ համարատասխանում են Արտելի նպատակներին :

6. Արտելի պարտավորությունները ապահովում են նրան պատկանող բոլոր դույքով, ինչպես և անդամների լրացուցիչ պատասխանատվությամբ համաձայն սույն կանոնադրության 11-րդ հոդվածի :

7. Արտելն ունի իր անվանական կնիքը :

## 2. ԱՐՏԵԼԻ ԿԱԶՄԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Արտելի անդամ կարող են լինել բոլոր չափահան աշխատավորները, վոր գրադլում են կամ սկսում են զրադիլ գյուղատնտեսությամբ կամ նրա հետ կապված զրադմունքներով :

Ընդհանուր ժողովի վորոշմամբ Արտելի անդամներ կարող են ընդունվել անչափահաններ սկսած 16 տարեկան հասակից :

Մասնաթ. — Արտելի անդամ չեն կարող լինել այն անձինք, վորոնք ունեն առեվլարական ձեռնարկություններ, նույնպես նրանք, վորոնք անգամադրված են այլ գյուղատնտեսական կոլեկտիվների :

9. Արտելի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի՝ ա) մասնակցել Ընդհանուր ժողովներին, ոգտվելով միայն մեկ վճռողական ձայնի իրավունքով. իր ձայնը ուրիշին հանձնելու իրավունք չունի, բ) տալ Խորհրդին Արտելի գործերի վերաբերյալ հայտարարություններ և պահանջել, վոր Խորհրդը քննե այդ հայտարարությունները. գ) ոգտվել Արտելի աջակցությունից և ոգտնությունից՝ համաձայն Ընդհանուր ժողովի սահմանած կանոնների : Արտելի յուրաքանչյուր 18 տարին լըրացած անդամ կարող ե ընտրվել Արտելի վարչական որդաններում :

10. Արտելի յուրաքանչյուր անդամ պարտավոր ե մասնակցել Արտելի Ընդհանուր գործերին իր անձնական աշխատանքով՝ Արտելի կանոնադրությամբ սահմանած կարգով, իրագործել Արտելի կանոնադրությունը, Ընդհանուր ժողովի վորոշումները և յենթարկվել Արտելի ներքին կարգադրության կանոններին :

11. Արտելի յուրաքանչյուր անդամ մյուս անդամների հետ միասին պարտավոր ե կրել իր գույքով լրացուցիչ պատասխանատվություն Արտելի պարտավորությունների նկատմամբ, վորը չպիտի գերազանցե փայի ..... պատիկ գումարից :

Լրացուցիչ պատասխանատվությունն իրագործվում է Արտելի անանկանալու գեպքում նրա լուծարքի ժամանակ, նույնպես սույն կանոնադրության 39-րդ հոդվածում նախատեսնված դեպքերում :

Արտելի անդամներին ընդունելու, հեռացնելու  
և վտարելու կարգն ու պայմանները.

12. Արտելի անդամներին ընդունում ե Ընդհանուր  
ժողովը, առաջնորդվելով սույն կանոնադրության  
47-րդ հոդ.:

13. Արտելի մեջ մտնել ցանկացողը պարտավոր ե  
տալ Արտելի Խորհրդին դրավոր դիմում. ընդունելու  
դեպքում պարտավոր ե մուծել անվերադարձ մուտքի  
վճար.....ուրբի և փայ.....

Ծանոթ. — 1. Փայերը սահմանում են այն  
չափով, վորը անհրաժեշտ ե համայնական տրն-  
սեսությունը կառավարելու համար:

Ծանոթ. — 2. Արտելի Խորհրդի վարոշմամբ  
փայը կարող է մուծվել վոչ միայն դրամով, այլ  
և զույքով և Ընդհանուր ժողովի վորոշմամբ  
մաս-մաս:

14. Արտելի խորհրդի և անդամների միջև կայա-  
ցած համաձայնությամբ, վերջիններս, բացի սահման-  
ված փայից, կարող են մուծել գույք իրեն ավանդ  
ժամկետավոր կամ անժամկետ, վորոշ տոկոսով, վորը  
տրվելու յե Արտելի յեկամուտներից և վորը սակայն  
չպետք է գերազանցե այն տոկոսից, վոր վճարում և  
տեղային վարկային ընկերությունն իր ավանդների հա-  
մար:

Ավանդներն իրենց տոկոսներով վերադարձվում են  
այսպես. անժամկետ ավանդները ըստ պահանջի տեղե-  
րի, սակայն Արտելի ներքին կարգադրության կանոննե-  
րով սահմանված ժամկետներին, և անդամների հեռա-  
նալու կամ վտարվելու ժամանակ. ժամկետավորները՝  
ժամկետները լրանալիս:

15. Արտելի մեջ ընդունվող անդամը կրում է նաև  
պատասխանատվություն այն պարտավորությունների  
հանդեպ, վոր համան ե առել Արտելը մինչև այդ ան-  
դամի ընդունվելը: Մահացած անդամի գույքային ի-  
րավունքները անցնում են նրա ժառանգներին (իրավա-  
հաջորդներին):

16. Յուրաքանչյուր անդամ իրավունք ունի հեռա-  
նալ Արտելից, տալով դրա մասին դրավոր դիմում:

17. Այն անդամը, վորը չի կատարում Արտելի  
հանդեպ իր պարտականությունները, խուսափելով աշ-  
խատանքից, խախտելով կանոնադրությունը, չնե-  
թարկելով Ընդհանուր ժողովի վորոշմանը, կարող է  
հեռացվել Արտելից:

18. Կամավոր հեռացած կամ հեռացված անդամն  
իրավունք ունի հետ ստանալու Արտելի Ընդհանուր ժո-  
ղովի սահմանած ժամկետներին իր մուծած փայերը,  
դուրս դալով միայն Արտելի կրած վնասը ծածկելու  
համար այդ անդամին հասանելիք վնասի մասը, վորը  
վորոշվում է տնտեսական տարվա վերջին:

Հեռացած կամ հեռացված անդամի հետ հաշիվ են  
տեսնում հեռացած տարվա լնթացքում Արտելի ընդ-  
հանուր տնտեսության մեջ նրա կատարած և չվարձա-  
տրված աշխատանքների համար համաձայն Ընդհանուր  
ժողովի սահմանած կանոնների: Արտելի հեռացած կամ  
հեռացված անդամները (մահանալու դեպքում—նրանց  
ժառանգները) պատասխանատու յեն լրացնեցիչ պա-  
տասխանատվության կարգով (հոդ. 6-րդ) մեկ տարի  
ժամանակով, հաշված նրանց հեռացած որից, Արտելի

այն պարտավորությունների հանդեպ, վոր գոյություն  
են ունեցել մինչև նրանց հեռանալը:

19. Վերջնական հաշիվը հեռացած անդամների հետ  
կատարվում ե տարվա հաշվետվությունը Ընդհանուր  
ժողովի կողմից հաստատելուց հետո—մեկ ամսվա ըն-  
թացքում: Յեթե Արտելի սուացած ոգուտները բաժան-  
վում են անդամների մեջ, հեռացածներին տրվում ե  
նրանց հասանելիք մասը:

20. Կամավոր հեռացած և հեռացված անդամներն  
իրավունք ..... ունին պահանջել Արտելի հողամա-  
սերից անջատել իրենց համար հող

---

Ծանոթ:— Այն հողամասերից, վորոնք աըր-  
գած են Արտելին պետական հողային գույքերից,  
Արտելի անդամի հեռանալու կամ հեռացվելու  
դեպքում, նրան մաս չի հանդում: Արտելի լու-  
ծարքի յենթարկվելու դեպքում հիշյալ հողերը  
վերադարձվում են Պետհողգույքերին:

21. Արտելի միջոցները կազմվում են՝ Անդամնե-  
րի մուծումներից, տնտեսական գործարքների յեկա-  
մուտներից, փոխառություններից և այլ աղբյուրնե-  
րից:

22. Արտելի միջոցները բաժանվում են՝ հիմնա-  
կան, պահեստի և հատուկ դրամագլուխների:

23. Հիմնական դրամագլուխը կազմվում է ան-  
դամների փայերից, ոգուտների հատկացումներից՝ հա-  
մաձայն Ընդհանուր ժողովի վորոշումների, յերկարա-  
տե փոխառություններից, վորոնք ստացված են զանա-  
զան կազմակերպություններից և հիմնարկություններից  
հատուկ նպատակով իբրև հիմնական դրամագլուխի, և  
այլ մուտքերից:

24. Արտելի համայնացած միջոցներն ուժեղացնե-  
լու և Արտելում կազմած դրամագլուխներն ել ավելի  
կայուն դարձնելու համար կազմվում է հատուկ անբա-  
ժանելի դրամագլուխ Արտելի ոգուտների տարեկան . . .  
. . . . տոկոսային հատկացումներից, վորից . . .  
տոկոս հատկացվում է հանրապետական, գավառային  
կամ գավառակային Փոնդին կուլեկտիվ գյուղատնտե-  
սության զարգացման համար:

Արտելի անբաժանելի դրամագլուխը գործադրվու-  
թ ե տնտեսական կարիքներին, միանալով Արտելի, ինչ-  
պես հիմնական, նույնպես և շրջանառու դրամագլուխ-  
ներին: Արտելի լուծարքի ժամանակ անբաժանելի դրա-  
մագլուխը չի բաժանվում անդամների միջև, այլ փո-  
խանցվում է կուլեկտիվ գյուղատնտեսության գորզաց-  
ման Փոնդին:

Ծանոթ:— Արտելի՝ վորպես անժամկետ և  
անտոկոս փոխառություն՝ ստացած պետգույքը  
(գյուղատնտեսական չնչավոր և անշունչ ինվեն-  
տոր, մելիորատիվ կառուցումներ, արդյունաբե-  
րական և ոժանդակ ձեռնարկներ և այլն) հաշվում  
ե անբաժանելի դրամագլուխի մեջ՝ այն արժեքով,

վորը կզնահատվի ստացման մոմենտին : Արտելի լուծարքի ժամանակ ստացած պետքույթը վերադարձվում է Պետգույթերին, իսկ արդյունաբերական ձեռնարկներին հանձնվում են գովառային կամ դրան համապատասխանող Գործադիր Կոմիտեյին :

25. Արտելի վնասները ծածկելու համար կազմվում ե պահեստի գրամագլուխ, վորին հատկացվում է Արտելի գուառ ոգուտներից վոչ պակաս քան 25 տոկոս :

Ցերք պահեստի գրամագլուխը հավաստրվում է փայերի գումարին, Ընդհանուր ֆողովը կարող է ու գուտներից այլևս հատկացումներ չանել պահեստի գրամագլուխին :

Ընդհանուր ֆողովը սահմանում է պահեստի գրամագլուխի պահպանման կարգը, վորին ապահովում ե նրա ամբողջությունը և նրա ողտագործումը համաձայն որենքով սահմանված կանոնների :

26. Արտելը կարող է կազմել հատուկ դրամագլուխներ, վորոնք գործադրվելու յեն Արտելի հատուկ գործարքներում (մէլիորատիվ աշխատանքներ և այլն) : Այդպիսի գրամագլուխներ կազմվում են և ծախսվում Ընդհանուր ֆողովի հատուկ վորոշումներով :

27. Իր միջոցներն ուժեղացնելու համար Արտելը կարող է փոխառություն կնքել կոռպերատիվ կազմակերպությունների, պետական և այլ հիմնարկների հետ : Փոխառություն կնքում է Արտելի Խորհուրդը այն չափով և պայմաններով, վորոնք սահմանվում են Ընդհանուր ֆողովի կողմից :

28. Արտելի առանձին անդամների պարտավորությունների և պարտքերի հատուցման, նույնպես և

վարչական անվիճելի պահանջների համար իրավունք չկա բռնագանձել փայերն ու Արտելի այլ միջոցները :

#### 4. ԱՐՏԵԼԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Աշխատանքների կատարման կարգը .

29. Արտելն իր տնտեսությունը վարում է կազմակերպչական—տնտեսական ծրագրով, վորը կազմվում է մի քանի տարվա համար, և տարեկան արտադրական ծրագրով . այդ յերկու ծրագիրն ել հաստատվում է Ընդհանուր ժողովով :

30. Արտելը տնտեսության մեջ բոլոր աշխատանքները կատարում են նրա անդամներն և սրանց ընտանիքների անդամներն իրենց անձնական ուժերով միասին՝ համաձայն աշխատանքների կատարման՝ Ընդհանուր ֆողովի կողմից սահմանված կանոնների : Արտելին թույլատրվում է աշխատանքների կատարման համար գրասից աշխատավորներ հրավիրել բացառիկ գեղքերում, յեթե արտելում անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար չել բավարարում յեղած աշխատավոր ուժերի քանակը (խոտհարքի, հացահատիկների հնձի, կալսելու միջոցին և այլն) : Բացի գրասից, Արտելը կարող է հրավիրել ժամանակավոր կամ մշտական աշխատանքի՝ գյուղատնտեսության և հաշվետարության վերաբերյալ մասնադիտներ և այլ մասնագիտություն ունեցող անձանց, վորոնօ ահճառիտ են Արտելի համար :

31. Արտելում աշխատանքները կատարվում են ինչպես Արտելի, նույնպես և նրա անհատ անդամների ինվենտարով։ Անդամների և արտելային ընդհանուր ինվենտարի ոգտագործման կարգը և պայմանները սահմանում են Ընդհանուր ժողովը։

32. Գյուղատնտեսական աշխատանքներն Արտելի աշխատունակ անդամների և նրանց ընտանիքների անդամների միջև բաժանվում են Խորհրդի կամ վերջինիս կողմից նշանակված հատուկ անձի պատվիրով։

33. Արտելի վոչ մի անդամ, դրանց թվում և ընտրված պաշտոնատարները, իրավունք չունի հրաժարվել ֆիզիկական աշխատանք կատարելուց։ Աշխատանքից ազատվել կարելի յեմիայն Խորհրդի վրոշմանը՝ Ընդհանուր ժողովի հաստատած կանոնների համաձայն։

34. Դիտավորյալ կերպով կամ անզգույշ վերաբերմունքի հետևանքով ինվենտար փչացնելու, առանց հարգելի պատճառների աշխատանքի չդնալու, հանձնարարած աշխատանքները պարզապես վատ կատարելու և ընդհանրապես աշխատանքի դիսցիպլինայի խախտման դեպքում Ընդհանուր ժողովը կարող է Արտելի նման անդամին յենթարկել տուգանքի, մինչև անդամ հեռացնել Արտելից։

35. Արտելի Խորհուրդը պարտավոր է տանել Արտելի ամեն մի անդամի և նրա ընտանիքի ամեն մի անդամի արտելային տնտեսության մեջ կատարած աշխատանքների նիշտ հաշվեառումը։

Արտելի տնտեսության արդյունքների բաշխման կարգը։

36. Արտելի տնտեսության արդյունքներն անդամների միջև բաժանելիս հաշվի են առնվում՝ ա) աշխատանքի քանակը, վորը կատարել են Արտելի տնտեսության մեջ Արտելի անդամը և նրա ընտանիքի անդամները, բ) աշխատանքի տեսակը և վորակը, գ) գյուղատնտեսական ինվենտարի արժեքը, վորը տրված է Արտելին ոգտագործելու (չնչավոր և անչունչ). դ) յուրաքանչյուր անդամին հասանելիք հողի տարածությունը և յե) այլ պայմաններ, վոր սահմանել է Արտելի Ընդհանուր ժողովը։

37. Տարվա ընթացքում Արտելի անդամների ըստացած արժեքները (դրամ, մթերք և այլն) տնտեսական տարվա արդյունքները բաժանելիս հաշվում են նրանց հասանելիք բաժնի վրա։ Վերջնական հաշվին ամբողջ տարվա համար կատարվում է տարեկան հաշվետվությունը հաստատելուց հետո։

Ոգուտի բաշխման և վճարի ծածկման կարգը։

38. Արտելի գուտ ոգուտը, հաստատված տարեկան հաշվետվությամբ, բաշխվում է հետեւյալ կերպով։ 40 տոկոսը հատկացվում է հիմնական դրամագլուխին, վորի մեջ և անբաժանելի դրամագլուխին։ 25 տոկոսը պահեստի դրամագլուխին։ Մնացած մասը Ընդհանուր ժողովը կարող է հատկացնել հատուկ դրամագլուխներ կազմելու կամ այդպիսիները ուժեղացնելու, աշխատանքների համար լրացուցիչ և պրեմյալ վարձատրու-

թյուն տալու, նույնպես և կուլտուր-կրթական ու այլ կարիքներին:

39. Արտելի տնտեսությունից կամ նրա շրջանառությունից գոյացած վնասը ծածկվում է պահեստի գրամագլուխով. յեթե վերջինս անբավարար լինի, Արտելի մյուս դրամագլուխներով: Ընդհանուր ժողովն, անձեռնմիելի թողնելով վերջին դրամագլուխները, իրավունք ունի պակաս գումարը հավաքել բոլոր անդամներից և ծածկել վնասը: Յեթե անդամներից վորմանք սահմանված ժամկետին չվճարեն իրենցից պահանջվելիք մասը, Խորհուրդը դրանց փայերն եւ հատկացնում վնասին, իսկ պակասը դանձում նրանցից կանիիկ: Վնասների այդպիսի հավաքումը անդամներից չի դադարեցնում և չի պակսեցնում անդամների Մացուցիչ պատասխանատվությունը Արտելի պարագորությունների հանդեպ նրա լուծարքի ժամանակ:

## 5. ՀԱՇՎԵՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

40. Արտելում անպայմանորեն տարվում են հաշվետարական դրգեր, վորոնց մեջ դրանցվում են.

ա) Արտելի շրջանառության ընդհանուր մուտքն ու յելքը և դրամարկղը. բ) պաշարի և մթերքների հաշվեառումը, գ) չնչալոր և անշունչ ինվենտարի ու շարժական գույքի հաշվառումը. դ) զանազան անձանց և էինարկությունների հաշիվները. յե) Արտելի անդամների անվանացուցակը, ցույց տալով յուրաքանչյուրի հաշիվն առանձին-առանձին:

41. Արտելի հաշվետու տարին համարվում է . . . . . թինչե . . . . . Արտելի Խորհուրդը

պարտավոր եւ հաշվետու տարին վերջանալուց 4ետայնը կու ամսից վոչ ուշ հրավիրել անդամների Ընդհանուր ժողովը և ներկայացնել նրա հաստատությանը Արտելի աշխատանքների տարեկան հաշվետվությունը: Հաշվետվությունը պետք է պարունակե իր մեջ Արտելի գործունեյության բոլոր անհրաժեշտ տվյալները, մասնաւորապես՝ ա) Արտելի դրամագլուխների հաշիվը, բ) ուղուաների և վնասների հաշիվը, գ) նրա մեջիւ վը, դ) ուղուաների գնացության հաշիվը (հաշվեկշիռը) և դ) Արտելի անդամների կաղմի մեջ յեղած փոփոխությունները:

42. Մինչև Ընդհանուր ժողովին ներկայացնելը, հաշվետվությունը, փաստաթղթերն ու հաշվետարական դրգերը ստուգում եւ Վերստուղիչ Հանձնաժողովը, և նախքան Ընդհանուր ժողովը յերկու շաբաթով ընթացքում հնարավորություն եւ տրվում Արտելի անդամներին ծանոթանալ հաշվետվությանը: Վերստուղիչ Հանձնաժողովի յեղակացությունը հաշվետվության մասին դեկուցվում եւ Ընդհանուր ժողովին:

## 6. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԵԼԸ

43. Արտելի գործերի կառավարելը դրվում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի վրա:

ա) Ընդհանուր ժողով.

44. Ընդհանուր ժողովը կաղմվում է Արտելի բոլոր անդամներից. Ընդհանուր ժողովը հանդիսանում է Արտելի վարչական գերագույն որդանը: Նրան է Արտելի վարչական գերագույն որդանը:

պատկանում Արտելի գործերի ընդհանուր ղեկավարաման իրավունքը և Արտելի կյանքում ծագող բոլոր կարեվորագույն հարցերի լուծումը:

Ընդհանուր ժողովը՝ ա) տալիս ե Խորհրդին ղեկավարող ցուցմունքներ, բ) լուսմ ե և հաստատում նախահաշվիները, արտադրական ծրագրները և Խորհրդի ու Վերստուգիչ Հանձնաժողովի հաշվետվությունն Արտելի գործունեյության մասին. գ) Կատարում ե անդամների ընդունելությունն և հեռացումը. դ) վերանայում ե և համապատասխան վորոշում հանում այն հարցերի վերաբերյալ, վորոնք անդամների կողմից ներկայացվում են Ընդհանուր ժողովի քընությանը. յե) հաստատում ե Խորհրդի կնքած դորձարքները. զ) ընտրում ե Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի կազմը և քննում ե նրանց վերաբերյալ բողոքները. ե) հաստատում ե կանոններ, վորոնք վերաբերում են Արտելի անդամների պարտականությունների կատարմանը, անդամների աշխատանքի վարձատրությանը, աշխատանքի արդյունքների բաշխմանը, հեռացող անդամների հաշվիներին, ավանդների ընդունելուն և վերաբարձնելուն և այլն. ը) մշակում ե զանազան տեսակ այլ խնդիրներ վորոնք չեն նախատեսնված սույն կանոնադրությամբ:

45. Ընդհանուր ժողովները լինում են հերթական և արտակարգ: Հերթական ժողովները հրավերում ե Խորհրդուն այն ժամկետներին, վոր սահմանել և ընդհանուր ժողովը, բայց վոչ սակայ, քան Զանդամ տարվա ընթացքում:

Արտակարգ Ընդհանուր ժողովները հրավերվում են Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի վորոշմամբ, կամ թե Արտելի անդամների ընդհանուր թվի մեկ հինգերորդ մասի պահանջմամբ:


46. Ընդհանուր ժողովն որինական է, յեթե այնտեղ ներկա յե բոլոր իրավասու անդամների վոչ պահակաս քան 50 տոկոսը: Ընդհանուր ժողովում հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամանությամբ, բաց քիեարկությամբ: Ընդհանուր ժողովի վորոշումները պարտադիր են Արտելի բոլոր անդամների համար, ինչպես ներկա յեղողների, նույնական և Ընդհանուր ժողովից բացակայողների:

750

Մանր.—Եթե Ընդհանուր ժողովը չի կայանում, անդամների համապատասխան թվի բացակայության պատճառով, նախակվում ե յերկրորդ ժողովը վոչ վաղ քան հետեւյալ որը և յերկու շաբաթից վոչ ուշ:

Յերկրորդ անդամ հրավերված Ընդհանուր ժողովը համարվում է որինական անկախ ներկա յեղողների թվից: Սակայն այն հարցերը, վարոնը նախատեսնված են սույն կանոնադրության 47-րդ հոդվածում, կարող են լուծվել, յեթե Ընդհանուր ժողովը բավարարում ե 47-րդ հոդվածի պահանջները:

47. Արտելի բոլոր անդամների ձայների 2/3-ի մեծամանությունն ե պահանջվում հետեւյալ հարցերը լուծելու համար. ա) Արտելի անդամների աշխատանքների գնահատման պարբանները և վճարման կարգը. բ) անդամների ընդունման և հեռացման հարցը. գ) Կանոնադրության վտանգիման և լրացման հարցը. դ) վնասների բաժանումը անդամների վրա, համա-



ձայն կանոնադրության 39-րդ հոդվածի և յե) Արտեմի լուծարքի հարցը:

48. Ընդհանուր ժողովի վորոշումները գրանցվում են արձանադրությունների մեջ, վոր ստորադրում են Ընդհանուր ժողովի նախադահը, քարտուղարը և ժողվականներից վոչ պակաս քան յերեք հոգի:

Ընդհանուր ժողովում յուրաքանչյուր անդամ իրավունք ունի հայտարարելու իր առարկությունները և պահանջել, վոր այդպիսիք գրանցվեն արձանադրության մեջ, յեթե նա դանում են Ընդհանուր ժողովի վորոշումը հակասական կանոնադրությանը և Արտելի ընդհանուր շահերին:

49. Խորհրդի և Վերստուղիչ Հանձնաժողովի անդամներն Ընդհանուր ժողովում մասնակցում են մյուս անդամների հետ հակասար իրավունքներով, սակայն չունին վճռողական ձայնի իրավունք հետեւյալ հարցերը լուծելիս ա) նրանց հաշվետվությունը հաստատելիս և զործունելությունը գնահատելիս, բ) նրանց վարձատրությունը վորոշելիս. գ) Խորհրդի և Վերստուղիչ Հանձնաժողովի անդամներին ժամկետից առաջ հեռացնելու հարցում և դ) նրանց սպատասիսնատվության կանչելու խնդրում:

բ) Արտելի Խորհուրդը

50. Խորհուրդը հանդիսանում է Արտելի գործադիր մարմինը և գործում է համաձայն կանոնադրության ու Ընդհանուր ժողովի վորոշումների: Նա վարում է Արտելի անունից, առանց գորա համար ունենալու հատուկ լիազորագիր, Արտելի բոլոր գործերն

ու հարաբերությունները պետական հիմնարկությունների, զանազան կազմակերպությունների և մասնավոր անձանց հետ:

51. Խորհուրդն ընտրվում է Արտելի անդամներից Ընդհանուր ժողովում վոչ պակաս յերեք հոգուց և 2 հոգի թեկնածուներ, վորոնք Խորհրդի անդամներին փոխարինում են նրանց բացակայության և հեռացման դեպքերում: Խորհրդի նախադահին ընտրում է Ընդհանուր ժողովը:

Ծանոթ. — 1. Խորհրդի և Վերստուղիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել այն անձինք, վորոնք զրկված են բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորական խորհուրդներում բնտրելու և ընտրվելու իրավունքից: Նույնպես նրանք, վորոնք գրամ և զյուղատնեսական մթերքներ տոկոսով են տալիս:

2. Խորհրդի և Վերստուղիչ Հանձնաժողովի անդամ, նույնպես և միաժամանակ Խորհրդի Վերստուղիչ Հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ամուսինները և նրանք, վորոնք ունեն մինչեւ 3-րդ աստիճանի ներառյալ արենակցություն (ծընողներ և զավակներ, սպակեր և թոռներ, յեղայրներ և քույրեր, հորեղբայրներ և յեղբոր տղաներ ու աղջիկներ մոր յեղբայրներ և քույր տղաներ ու աղջիկներ և այլն):

52. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները բաժանում են միմյանց մեջ փոխադարձ համաձայնությամբ, ըստ վորում գանձապահի և հաշվետարի պարտականություններն անհամատեղելի յեն, այսինքն չպետք է մեկ անձն կատարե:

53. Խորհրդի նիստերը համարվում են կայացած, յեթե ներկա յեն նրա անդամների վոչ պակաս քան

50 տոկոսը, վորոնց թվում նախավահը կամ նրա տեղակալը:

54. Խորհրդի վրա դրվում են՝ ա) Արտելի տրնտեսության կառավարման և ղեկավարման գործը. բ) Արտելի անդամների աշխատավարձի հաշվառումը համաձայն այն պայմանների, վոր ընդունել և Ընդհանուր ժողովը, գ) Արտելի անունից զանազան անձանց և կազմակերպությունների հետ պայմանագրերի և պարտավորությունների կնքումը, վորոնց թվում նաև փոխառություններ վերցնելը՝ Ընդհանուր ժողովի վորոշած սահմաններում. դ) Արտելի համար բոլոր հարկավոր առարկաների և նյութերի՝ կանխիկ դրամով կամ վարկով՝ ձեռք բերելը, պահպանելը և գործածելը կամ ծախսելը. յե) Բոլոր տեսակ մուտքերի և վճարումների ընդունումը, ծախսերի կատարումը Ընդհանուր ժողովի հաստատած նախահաշվով, Արտելի գումարների պահպանումը և բաց թողնելը. զ) Արտելի ծառայողների և ժամանակավոր աշխատակիցների հրավիրելը և հեռացնելը հ) տնտեսական պլանի, ծախքերի և յեկամուտների նախահաշվի կազմելը. ը) հաշվապահական գրքերի վարումը և հաշվետվություններ կազմելը. թ) գանձումներ կատարել և դատարանում պատասխանել Արտելի դեմ հարուցած հայցերին և ժ) այլ պարտականություններ, վորոնք նախատեսնված են Ընդհանուր ժողովի կողմից և սույն կանոնադրության մեջ.

55. Խորհրդում բոլոր գործերը վճռվում են ֆայների հասարակ մեծամասնությամբ: Զայների հավա-

սարության դեպքում հարցը փոխադրվում ե Խորհրդի հետեւյալ նիստին կամ Ընդհանուր ժողովին:

Խորհրդի վորոշումները գրանցվում են արձանագրության մեջ. ստորագրում են ներկա յեղող անդամները:

56. Խորհրդի անդամները, վորոնք խախտել են իրենց պարտականությունները, պատասխանատու յեն բոլորը համահավասար իրենց ամբողջ գույքով իրենց հանցանքով Արտելին հասցրած վիճակների համար:

57. Արտելի կողմից տրվելիք դրամական փաստաթղթերը, պարտավորությունները և հավատարմագրերը ստորագրում են Խորհրդի նախագահը կամ նըրա տեղակալը և Խորհրդի մեկ ուրիշ անդամ:

### 7. ՎԵՐՍՈՒԻԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

58. Արտելի Խորհրդի տնտեսական գործունեյությունը հսկողության և ստուգման յենթարկելու համար Ընդհանուր ժողովում ընտրվում ե Վերստուգիչ Հանձնաժողով, վորին իրավունք ե վերապահվում ստուգումներ կատարել ցանկացած մոմենտին:

59. Վերստուգիչ Հանձնաժողովի վրա դրվում ե պարտականություն յերեք ամսվա ընթացքում վոչ պակաս քան մեկ անգամ կատարել փաստացի քննություն դրամարկղի, Արտելի գույքի և բոլոր գործառնությունների, ստուգում Արտելի տարեկան հաշվետարության, արդարացուցիչ փաստաթղթերի, ընթացիկ հաշվետվության, նույնպես և մանրամասն ըստուգում Արտելի տարեկան հաշվետվության, և ներկայացնել այդ մասին իր յեղակացություններն Ընդհանուր ժողովին:

60. Վերստուգիչ Հանձնաժողովը, թվով յերեք անդամ և յերկու թեկնածու, ընտրվում ե մեկ տարի ժամանակով։

## 8. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՅԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Արտելի Ընդհանուր Ժողովը կարող ե և ըստ 47-րդ հոդվածի փոփոխել և լրացնել ներկա կանոնադրությունը։

Կանոնադրության մեջ կատարված բոլոր փոփոխությունների մասին Արտելի Խորհուրդը պարտավոր ե անհապաղ հայտնել ի գիտություն այն հիմնարկին, վորտեղ դրանցված ե Արտելի կանոնադրությունը, և միայն այդ փոփոխությունների դրանցումից հետո նրանք որինակ ուժ են ստանում։

## 9. ԱՐՏԵԼԻ ԱՆԿՈՒՄԸ

62. Արտելը դադարեցնում ե իր գործունեյությունը՝

ա) Ընդհանուր Ժողովի վորոշմամբ.

բ) Յեթե Արտելի անդամների թիվը պակաս կլինի հինգ հոգուց։

գ) Դատարանի վորոշմամբ, յեթե Արտելը հայտարարվում ե սնանկ։

դ) Գավառական Գործադիր կոմիտեյի վորոշմամբ այն դեպքերում, յերբ Արտելը չեղվում ե իր կանոնադրությունից կամ գործում ե ի վնաս պետական ջահերի։

63. Արտելի փակման կարգը, լուծարքի ժամկետը, լուծարքային Հանձնաժողովի գործունեյության կարգը և պարտատերերի պահանջների բավարարումը վորոշվում են կոոպերատիվ կազմակերպությունների լուծարքի, բաժանման և միացման կարգի վերաբերյալ որևէնքով, վորը հաստատված ե Միութենական Կենտրոնական կոմիտեի և Ժողովական կոմիտեի կողմէից 1927 թ. հունիսի 15-ին (Որենքների Ժողովածու, 1927 թ. № 37 հոդ. 372) և զյուզատնեսական կոոպերացիայի վերաբերյալ Որենքի 131·154 հոդվածներով՝ հաստատված ՌԽՍՖՀ Կենտրոնական կոմիտեի և Ժողովական կոմիտեի կողմէից 1927 թվի հոկտեմբերի 3-ին։

64. Արտելի անդամների փայերի վերադարձնելը կատարվում է, յերբ ամբողջովին հանդցվում են Արտելի պարտաքերը, համենայն դեպս յերեք ամսից վոչ շուտ հաշված այն որից, յերբ Արտելի լուծարքի մասին հայտարարություն ե արված։

Արտելի պարտաքերը վճարելուց, անդամներին փայերը և գույքը վերադարձնելուց և անդամնելի դրամաղյուիր զատելուց հետո, Արտելի մնացած միասնաբար ձեռք բերած զույքի ինչ նպատակի հատկացնելը վորոշում ե Ընդհանուր Ժողովը։

65. Արտելի գույքային լուծարքը վերջացնելուց հետո հողային Փոնդը

— 24 —

— 25 —



## Գ Ր Ա Հ Ա Ն Գ

Գյուղատնտեսական Արտելի կանոնադրության  
վերաբերյալ.

Կանոնադրությունը չի ծառայում միայն նրա համար, վոր Արտելը կարողանա որինական իրավունքներ ստանալ: Կանոնադրության գիմավոր նպատակն է լինել մշտական ձեռնարկ Արտելի համար նրա աշխատանքների ժամանակ:

Կանոնադրությունն ընդունելիս հարկավոր ե լավ զնել, քննել նրա ամեն մեկ հոդվածը և, յեթե կարեք լինի, փոխել ու լրացնել: Համապատասխան են արդյոք այդ փոփոխություններն ու լրացումներն որենքներին, ցույց կտա Գավհողբաժինը կանոնադրությունը ցուցակագրելիս:

Ինչպես լրացնել կանոնադրության բաց տեղերը.

1. Կանոնադրության առաջին հոդվածում գործվում է Արտելի անունը, ցույց ե տրվում նրա գործնեյության շրջանը: Արտելի գործունեյության շրջանը պետք ե համարել այն վայրը, վորտեղ գտնվում ե նրա հողային ֆոնդը: Ապա ցույց ե տրվում, թե Արտելի հողամասերն ինչ հողերից են բաղկացած. Արտելի անդամների շնչարաժին հողերից, վոր տրվել են նրանց ընդմիշտ ողտադրծելու և միացվել են մեկ տեղում. պետական ֆոնդի հողերից, վոր տրվել են Արտելին ընդմիշտ աշխատավորական սկզբունքով ողտավելու կամ

այն հողերից, վոր տրվել են Արտելին գավհողբաժինը և այլ հիմնարկություններ ու կազմակերպություններ:

2. 11-րդ հոդվածում ցույց ե տրվում լրացուցիչ պատասխանատվության չափը (տես հոդ. 6 և 39-րդ) Արտելի պարտավորությունների հանդեպ, որինակ գոտանապատիկ»:

3. 13-րդ հոդվածում նշանակում են մուտքի վը-ճարի և փայի չափը, վորը վորոշել է Արտելի Հիմնա-դիր ժողովը:

4. 20-րդ հոդվածում վորոշվում են հողային հա-րաբերությունները հեռացող անդամների հետ: Առա-ջին բաց տեղում գրում են «չ» տառը, յեթե հողի բա-ժանում չի յենթադրվում: Իսկ յեթե յենթադրվում ե, այդ բաց տեղում գիծ քաշել և հետեւյալ բաց տեղում գրել, թե ինչ հիմունքներով յենթադրվում ե հողի բաժանում կատարել:

Այդ հարցը վճռելիս հարկավոր ե նկատի ունե-նալ հետեւյալ հիմնական դրությունները:

ա) Յեթե Արտելի հողային ֆոնդը բաղկացած ե նրա անդամների չնչարաժին առանձին հողերից, վոր տրվել են նրանց ընդմիշտ աշխատավորական սկզբ-րունքով ողտավելու համար և Արտելի կազմակերպման ժամանակ միացվել են մեկ տեղում, ապա Արտելի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի Արտելից հեռանալիս պահանջի իրեն հասանելիք հողի բաժինը: Այդ բաժինը վորոշվում է հեռացողի ընտանիքի շըն-չերի քանակով, բայց չի կարող լինել ավելի հողի այն քանակից, վոր նա տրվել է Արտելին:

բ) Յեթե Արտելի հողային ֆոնդը կազմվել է

Պետքոնդից ե տրվել և Արտելին ընդմիջու աշխատավորական սկզբունքով ողտվելու համար ըստ անդամների անվանական ցուցակի չնչերի քանակի, ապա հողի բաժանումը կատարվում ե առաջին կետի կանոններով. իսկ յեթե Արտելին հող տալիս այդպիսի ցուցակ չի յեղել, հեռացողին հող տալու հարցը կախված է Արտելի կամքից.

Դ) Յեթե Արտելը հողն ստացել է ժամանակավորակես ոգտվելու (վարձով) կամ չբաժանելու պայմանով, ապա հեռացողն իրավունք չունի հող պահանջելու:

Այս յերեք կետի համաձայն լրացվում են 20-րդ և 65-րդ հոդվածները, վորոնց մեջ ցույց ե տրվում, թե Արտելի լուծարքից հետո ուր ե գնում նրա հողային փոնդը, այսինքն բաժանվում ե անդամների միջև, թե հանձնվում ե հողային մարմիններին և այլն:

5. 41-րդ հոդվածում դրվում ե, թե յերբ ե համարում Արտելն իր հաշվետու տարվա սկիզբն ու վերջը. որինակ «Հոկտեմբերի մեկից» կամ «Հունվարի մեկից» մինչև «սեպտեմբերի 30-ը» կամ «դեկտեմբերի 31-ը»:

6. 45-րդ հոդվածում անհրաժեշտ ե ցույց տալ, թե տարվա ընթացքում Ընդհանուր ժողովներն առնվազն քանի անդամ պետք ե գումարվեն: 51-րդ հոդվածում—Խորհրդի անդամների թեկնածուների թիվը. 53-րդ հոդվածում Խորհրդի անդամների այն թիվը, վորն անհրաժեշտ ե Խորհրդի նիստերն որինական համարելու համար:

7. Այն բոլոր փոփոխություններն ու լրացում-

ները, վոր կանե Հիմնադիր ժողովը կանոնադրության մեջ, պետք ե արձանագրվեն կանոնադրության վերջում և դրվեն միատեսակ կանոնադրության այն յերեք որինակներում, վորոնք ուղարկվում են գրանցման:

Ինչպիս գրանցել կանոնադրությունը.

Առանց գրանցելու կանոնադրությունը Գավհողաբաժնում, Արտելը չի կարող գոյություն ունենալ վորովես իրավաբանական անձն<sup>\*)</sup>, և չի ոդավի այն իրավունքներով ու առավելություններով, վորոնցից ոդավում են Արտելները համաձայն գյուղատնտեսական կոռպերացիայի վերաբերյալ որենքի:

Վորպեսզի կանոնադրությունը պատրաստ լինի գրանցման համար, սպահանջվում ե, վոր Հիմնադիր ժողովն ընդունե կանոնադրությունը և հիմնադիրներից ստորագրեն կանոնադրության տակը վոչ պակաս քան հինգը: Գրանցման ուղարկվում են հետեւյալ փաստաթիրերը. 1) կանոնադրությունից յերեք որինակ այն հիմնադիրների ստորագրությամբ, վորոնք դիմում են տվել գրանցման մասին. 2) այն անձերի ցուցակն իրենց իսկական ստորագրությամբ, վորոնք ցանկություն են հայտնել լինել Արտելի անդամ, 3) դիմում կանոնադրությունը գրանցելու մասին և 4) տեղեկանք, թե բոլոր հիմնադիրներն ունեն իրավունք ընտրելու խորհուրդներում: Դիմումի մեջ հարկավոր ե ցույց տալ հասցեն, թե ուր պետք ե ուղարկվի դիմումը:

<sup>\*)</sup> Այն կազմակերպությունը, վոր ունի այս կանոնադրության 4-րդ հոդվածում ցույց տրված իրավունքները, կոչվում ե «իրավաբանական անձ»:

ժումի պատասխանը։ Յեթե դիմումն ուղարկվում է լիազորի միջոցով, դիմումի մեջ հարկավոր ե հիշել, թե այս ինչ անձին հանձնարարվում ե միջնորդել գրանցման մասին։

Դիմումի մեջ ցույց ե տրվում, թե հիմնադիրների մեջ չկան ամուսիններ և մինչև Յ-րդ աստիճանի (ներառյալ) արենակիցներ։

Դիմումի մեջ ստորագրությունները (թվով հընդուց վոչ պակաս) պետք ե հաստատած լինի գյուղխորհուրդություն կամ ՀՀՆԳՐՈՒԹՅՈՒՆ ։ Կանոնադրությունների և ցուցակի ստորագրությունները հաստատել չեն պահանջվում։ Թե կանոնադրությունների և թե մյուս փաստաթղթերի համար դրոշմային տուրք չեն վճարվում։

Գրանցման մերժման դեմ կարելի յե բողոքել մեկ ամսվա ընթացքում։ Բողոքն ուղարկվում ե Հողժողովումի Հողվարչության Գավհողբաժնի միջոցով։ Հարկավոր ե նկատի ունենալ, վոր հողորդանները պարտավոր են մեկ ամսվա ընթացքում կանոնադրությունը գրանցել կամ հայտնել մերժման մասին, ցույց տալով որևէ այն հոդվածները, վորոնց հիման վրա անհար ե կանոնադրությունը գրանցել։

Որենքով արտելի անդամները չեն կարող հնդից պակաս լինել։

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գրառեպակի, 820 ր.

Պատվեր

1010

Տերաֆ 1000



ՀՀ Ազգային գրադարան



NL0210134

ԳԻՆԸ 15 ԿՈՄ.

15